ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակի առիթով Հայաստան ժամանած Ռումինիայի Հանրապետության ակադեմիայի նախագահ Իոնել Հայդուկին եւ տարբեր երկրների ակադեմիաների ներկայացուցիչների՝ ուղեկցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Ռադիկ Մարտիրոսյանի:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ տարբեր երկրների ակադեմիաների ու գիտական հաստատությունների միջեւ ձեւավորված համագործակցությանը՝ հույս հայտնելով, որ փորձի փոխանակությունը եւ սերտ գործակցությունը պիտի նպաստեն գիտության առաջընթացին: Խոսելով գիտական հաստատությունների առջեւ ծառացած դժվարությունների ու մարտահրավերների մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ դրանք կհաղթահարվեն գիտնականների կամքի, համատեղ ջանքերի եւ գիտական հաստատությունների գործունեության վերակազմակերպման շնորհիվ:

Հանդիպման ընթացքում Ռումինիայի ակադեմիայի նախագահ Իոնել Հայդուկը Վեհափառ Հայրապետին շնորհեց Ռումինիայի ակադեմիայի դոկտորի պատվավոր կոչում: Նորին Սրբությանը փոխանցելով պատվավոր դոկտորի վկայագիրը՝ տիար Հայդուկը մեծագույն պատիվ նկատեց այս արարողությունը նախագահելը՝ վերահիշելով Նորին Սրբության այցը Ռումինիայի ակադեմիա եւ դասախոսությունը: Այս առիթով Ռումինիայի ակադեմիայի նախագահն ընդգծեց նաեւ, որ կրոնն ու գիտությունը ամբողջապես կարող են համագործակցել:

Վերստին շնորհավորելով հայ ակադեմիկոսներին ՀՀ ԳԱԱ 70-ամյակի առիթով եւ երախտագիտություն հայտնելով ներկաներին այցի ու պատվավոր կոչման համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տիրոջ օգնականությամբ առավել արգասաբեր դառնա ակադեմիաների միջեւ ձեւավորված համագործակցությունը:

Ռուբեն Սեւակի անվան թանգարանում